Գլխավոր տեղեկություն	
Номер	ԲԴԽ-50-Ն-8
Տիպ	Որոշում
Тип	Исходный акт (04.08.2020-по сей день)
Статус	Գործում է
Первоисточник	Միասնական կայք 2020.07.27-2020.08.09 Պաշտոնական հրապարակման օրը 03.08.2020
Принят	Բարձրագույն դատական խորհուրդ
Дата принятия	30.07.2020
Подписан	Բարձրագույն դատական խորհրդի նախագահ
Дата подписания	30.07.2020
Дата вступления в силу	04.08.2020

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԲԴԽ-50-Ն-8
2020 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9-Ի ԹԻՎ ԲԴԽ-23-Ն-1 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հուլիսի 9-ի թիվ ԲԴԽ-23-Ո-47 որոշմամբ և հիմք ընդունելով Հանրապետության նախագահի 2020 թվականի հունիսի 9-ի թիվ ՆՀ-121-Ա, թիվ ՆՀ-122-Ա, հունիսի 16-ի թիվ ՆՀ-128-Ա, հունիսի 24-ի թիվ ՆՀ-131-Ա, հունիսի 26-ի թիվ ՆՀ-132-Ա և թիվ ՆՀ-136-Ա, հուլիսի 3-ի թիվ ՆՀ-150-Ա հրամանագրերը, Բարձրագույն դատական խորհրդի 2020 թվականի հունիսի 4-ի թիվ ԲԴԽ-33-Ո-70 որոշումը՝ Բարձրագույն դատական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հուլիսի 9-ի ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով չսահմանված Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարանների նստավայրերը, նստավայրերի սպասարկման տարածքները սահմանելու, դատավորների՝ ըստ նստավայրերի և մասնագիտացման բաշխումն ու թվակազմը հաստատելու մասին» թիվ ԲԴԽ-23-Ն-1 որոշման հավելված 1-ում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Հավելվածի 2-րդ աղյուսակի «(քրեական մասնագիտացում)» բաժնի 17-րդ կետի «Դատավոր» սյունակը լրացնել «Շահվերդյան Մանվել Սամվելի» բառերով:

2) Հավելվածի 6-րդ աղյուսակի «(քրեական մասնագիտացում)» բաժնի 1-ին կետի «Նստավայրի անվանում» սյունակի «Արմավիր» բառը փոխարինել «Էջմիածին» բառով, իսկ «Դատավոր» սյունակի «Սարգսյան Հրաչիկ Երեգլոյի» բառերը փոխարինել «Ջիվանյան Վահե Ալեքսանդրի» բառերով:

3) Հավելվածի 8-րդ աղյուսակի «(քաղաքացիական մասնագիտացում)» բաժնի 4-րդ կետի «Դատավոր» սյունակը լրացնել «Թորոսյան Վահագն Սամվելի» բառերով:

4) Հավելվածի 9-րդ աղյուսակի «(քրեական մասնագիտացում)» բաժնի 5-րդ կետի «Դատավոր» սյունակի «Շահվերդյան Մանվել Սամվելի» բառերը փոխարինել «Սիմոնյան Անդրանիկ Արամի» բառերով:

5) Հավելվածի 10-րդ աղյուսակի «(քաղաքացիական մասնագիտացում)» բաժնի 2-րդ կետի «Դատավոր» սյունակը լրացնել «Արմենակյան Սարգիս Արմենի» բառերով:

6) Հավելվածի 12-րդ աղյուսակի «(քրեական մասնագիտացում)» բաժնի 4-րդ կետի «Դատավոր» սյունակը լրացնել «Բախշիյան Բորիս Հրանտի» բառերով:

7) Հավելվածի 12-րդ աղյուսակի «(քաղաքացիական մասնագիտացում)» բաժնի 3-րդ կետի «Դատավոր» սյունակը լրացնել «Ահարոնյան Ռոմեն Դերենիկի» բառերով:

8) Հավելվածի 12-րդ աղյուսակի «(քաղաքացիական մասնագիտացում)» բաժնի 5-րդ կետի «Դատավոր» սյունակը լրացնել «Աբգարյան Էմին Ռուբիկի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Բարձրագույն դատական
խորհրդի նախագահ **Ռ. Վարդազարյան**

2020 թ. հուլիսի 30
ք. Երևան

Պաշտոնական հրապարակման օրը՝ 3 օգոստոսի 2020 թվական:

Փոփոխման պատմություն

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան

Փոփոխված ակտ

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան